Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Կրթական ոլորտի փոքր դրամաշնորհային ծրագրեր 2018թ.

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հարց 1. Ծրագրի կարո՞ղ են դիմել իրավաբանական անձիք, օրինալ՝ դպրոց, բուհ:

Ծրագրին կարող են դիմել միայն ստորև թվարկված խմբերին պատկանող անհատները: Սույն հայտարարությանը իրավաբանական անձիք դիմել չեն կարող:

- տվյալ նախաձեռնության նախորդ փուլերի շրջանակում հիմնադրված համայնքային ակտիվ խմբերի և ծնողական խմբերի ներկայացուցիչներ,
- կրթության որակի և հասանելիության խնդիրներով մտահոգ ակտիվ քաղաքացիներ, ովքեր ցանկություն ունեն և կարող են նախաձեռնել և իրականացնել կրթական հաստատություններում և համայնքներում վերոհիշյալ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ,
- նախադպրոցական կրթական հաստատությունների և դպրոցների ծնողական խորհուրդների ներկայացուցիչներ,
- ակտիվ ուսանողներ:

Հարց 2. Արդյո՞ք մրցույթին կարելի է դիմել այնպիսի ծրագրի իրականացման համարը, որը ենթադրում է դիմող անձի ներկայիս աշխատանքային պարտականությունների կատարումից բխող գործողությունների իրականացում: Օրինակ. Կրթական հիմնադրամի որակի ապահովման մասնագետը՝ նույն հիմնադրամում դասընթացներ անցկացնելու համար:

Ոչ:

Հարց 3. Կարելի՞ է դիմել ուսուցիչների համար օրչազեկման ակցիաների անցկացման ծրագրով:

Այո, եթե իրազեկման ակցիայի թեման համապատասխանում է տվյալ մրցույթի թեմատիկ առաջնահերթությունների հետ: Փոքր դրամաշնորհային ծրագրերի 2018թ. փուլի ***թեմատիկ առաջնահերթություններն են***.

- բոլոր երեխաների կրթության իրավունքի հավասար, արդար ու համաչափ իրացում,
- որակյալ նախադպրոցական կրթության և հանրակրթության մատչելիություն, այդ թվում ներառական հանրակրթության հասանելիություն,
- կրթության համակարգում (այդ թվում՝ բուհերում) կոռուպցիայի և քաղաքականացվածության ազդեցության վերաբերյալ իրազեկության բարձրացում,
- կրթական հաստատությունների գործունեության թափանցիկություն և հաշվետվողականություն:

Հարց 4. Հնարավո՞ր է ընտրել մեկ կրթական հաստատություն, վեր հանել խնդիրները, որոնք ազդում են կրթության որակի վրա, տալ լուծումներ: Կարելի՞ է դիմել հետազոտական ծրագրով:

Սույն մրցույթի շրջանակում հետազոտական բնույթ ունեցող ծրագրեը չեն կարող ֆինանսավորվել: Ծրագրի շրջանակում խրախուսվում է հետևյալ տեսակի գործողությունների իրականացումը.

- կրթության ոլորտում սոցիալական արդարության, հավասարության, որակյալ կրթության հասանելիության խթանմանն ուղղված նախաձեռնող խմբերի հիմնադրում և զարգացում:
- թեմատիկ քննարկումների կազմակերպում՝ ծնողների, համայնքի բնակիչների, տեղական կրթական համայնքի ներկայացուցիչների, ուսանողների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
- երեխաների կրթության իրավունքի իրացման սահմանափակումների վերաբերյալ դեպքերի հավաքագրում և հանրայնացում:
- սոցիալ-տնտեսական կամ այլ պատճառներով կրթությունից դուրս մնացած երեխաների դեպքերի հավաքագրում և հանրայնացում:
- քարոզարշավների և շահերի պաշտպանության այլ գործողությունների իրականացում:

Հարց 5. Կարելի՞ է արդյոք ծրագրի իրականացման թիմում ընդգրկել ավագ դպրոցի աշակերտների:

Այո, սակայն միայն ծնողների գրավոր համաձայնությամբ:

Հարց 6. Լինելով Երևանի բնակիչ, կարելի՞ է արդյոք ծրագրի իրականացման վայր ընտրել որևէ այլ բնակավայր:

Այո: Նմանապես որևէ մարզային բնակավայրի բնակիչ կարող է ծրագիրն իրականացնել թե՛ Երևանում, թե՛ իր բնակության վայրից տարբերվող այլ բնակավայրում:

Հարց 7. Արդյո՞ք պարտադիր է բոլոր թեմատիկ առաջնահերթությունները ներառել ծրագրում, թե հնարավոր է ընտրել մեկը կամ մի քանիսը:

Կարելի է ընտրել հայտարարված թեմատիկ առաջնահերթություններից որևէ մեկը կամ մի քանիսը կամ բոլորը՝ դիմողի հայեցողությամբ:

Հարց 8. Արդյո՞ք անհրաժեշտ է կցել ծրագրի իրականացման թիմի բոլոր անդամների ինքնակենսագրությունները (CV):

Այո:

Հարց 9. Եթե ծրագիրն անդրադառնում է ուսումնական հաստատություններում կոռուպցիային և քաղաքականացվածությանը, ինչպե՞ս են կարգավորվելու ուսումնական հաստատությունների և ծնողների/ուսանողների միջև հարաբերությունները, որ ուսումնական հաստատությունը չխանգարի ծրագրի իրականացմանը:

Հիմնադրամը չի կարող երաշխիքներ տրամադրել՝ ծրագրի իրականացման ընթացքում որևէ տեսակի խոչընդոտների չհանդիպելու համար: Ծրագրի իրականացման ընթացքում բոլոր հարաբերությունները ենթակա են կարգավորման ծրագրի իրականացման թիմի և ուսումնական հաստատության միջև:

Հարց 10. Արդյո՞ք ծրագիրը պետք է հիմնված լինի իրականացված հետազոտության վրա:

Ոչ:

Հարց 11. Մրցույթի շրջանակում կարո՞ղ են ֆինանսավորվել այլ երկիր փորձի ուսումնասիրման համար մեկնման ճանապարհածախսերը:

Ոչ:

Հարց 12. Կարո՞ղ է արդյոք ծրագիր ներկայացնել ՀՀ քաղաքացի, ով արտերկրում է, սակայն կարող է պայմանագրով լիազորել այլ անձի:

Դիմող անձը ծրագրի իրականացման ողջ ժամանակահատվածում պետք է գտնվի Հայաստանում: Այլ լիազորված անձի միջոցով գրանտային պայմանագիր ստորագրվել և իրականացվել չի կարող:

Հարց 13. Ծրագրի գործողություններում կարելի՞ է արդյոք ներառել ծառայությունների մատուցում: Օրինակ. Կրթությունից դուրս մնացած երեխաների հատուկ խմբի դասընթացների կազմակերպում:

Ոչ:

Հարց 14. Կարո՞ղ է ծրագիրը տևել 3 ամսից ավել՝ նույն բյուջեի սահմաններում:

Ոչ: Բոլոր ծրագրերը՝ առանց որևէ բացառության, պետք է սկսվեն սույն թվականի սեպտեմբերի 1-ին և ունենան մինչև 3 ամիս տևողություն:

Հարց 15. Արդյո՞ք անհրաժեշտ է, որ բյուջեի ինչ-որ մաս նաև այլ աղբյուրներից ֆինանսավորվի:

Ոչ:

Հարց 16. Այլ աղբյուրից ֆինանսավորման մասով հետագայում արդյո՞ք անհրաժեշտ է լինելու ներկայացնել հաշվետվություն:

Ոչ: